ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունիսի 2012թվականի N 92-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ԳԱՅԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 80/6 ՀԱՍՑԵԻ 31.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Թելման Սամվելի Նազանյանը, Գայի փողոցի թիվ 80/1 հասցեի, իրեն սեփականության իրավունքով պատկանող խանութի 70.0քմ սպասարկման հողամասին կից գտնվող /Գայի փողոցի թիվ 80/6 հասցեի/ 31.0քմ մակերեսով հողամասը ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 31.0քմ մակերեսով հողամասի օտարումն աճուրդային կարգով կխոչընդոտի անձի իրավունքը և օրենքով պահպանվող շահերը: Այն նպատակահարմար է օտարել ընդլայնման կարգով, վերը նշված խանութի սեփականատեր Թելման Նազանյանին: Նշված հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է "Բնակավայրերի հողերի" տարածագնահատման տասներորդ գոտում:

Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջանի Գայի փողոցի թիվ 80/6 հասցեի 31.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 38 502 դրամ արժեքով օտարել քաղ. Թելման Նազանյանին:

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Դիլիջանի Գայի փողոցի թիվ 80/6 հասցեի 31.0քմ հողամասն, ընդլայնման կարգով, ուղղակի վաճառքի ձևով, 38502 դրամ արժեքով, քաղ. Թելման Նազանյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ